ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 297-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին թիվ 1910-Ն որոշմամբ՝
Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովվելու նպատակով սահմանել.
1) Թաղման կարգը համաձայն՝ հավելված N 1-ի,
2) գերեզմանատներում գերեզմանատեղերի հաշվառման և թաղումների գրանցման կարգը համաձայն՝ հավելված N 2-ի,
3) գերեզմանի վկայականի ձևը համաձայն՝ հավելված N 3-ի,
4) գերեզմանատների շահագործման ընդհանուր կանոնները համաձայն՝ հավելված N 4-ի,
5) գերեզմանատներից օգտվելու կանանները համաձայն՝ հավելված N 5-ի,
6) ընտանեական գերեզմանի կազմակերպման համար վճարովի հողատարածքի հատկացման կարգը և չափը համաձայն՝ հավելված N 6-ի,
7) վերահուղարկավորման կարգը համաձայն՝ հավելված N 7-ի:
2. Համայնքի վարչական տարածքի բնակավայրերում, բացառությամբ Թումանյան քաղաքի, գերեզմանատների շահագործման կանոնների պահպանման, գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորումների կազմակերպման ու գրանցման աշխատանքների կատարումը լիազորել վարչական ղեկավարներին:
3.Թումանյան քաղաքի գերեզմանատների բոլոր ծառայությունների իրականացման լիազոր մարմին ճանաչել «Թումանյան համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. օգոստոսի 29
ք.Թումանյան